

## Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«18» ԱՊՐԻԼԻ 2014 Թ. N 20-Ա ՀՐԱՄԱՆԻՑ

ՍԱՐԳԻՍ ԹՈՐՈՍՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին» N 436-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 3-րդ կետի «դ» ենթակետով և 5-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի տեղակալի 2014 թվականի ապրիլի 17-ի N 01/13/1/1410-14 գրությունը.

#### Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի օրենսդրության վերլուծության և կատարելագործման վարչության պետի (ծածկագիր՝ 14-2.1-9) քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար Սարգիս Լյովայի Թորոսյանի հետ 2014 թվականի ապրիլի 18-ից կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2014 թվականի ապրիլի 18-ից:

Նախարարի պաշտոնակատար՝

**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**